ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՊՁԲ-24/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգով առանց շարժիչի հեծանիվների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 07.03.2024թ. ժամը 15:00-ին Էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գիլոյան
Հանձնաժողովի անդամ՝ Դավիթ Բաղումյան
Սերգեյ Աբրահամյան
Գարեգին Խլղաթյան
Սվետլանա Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՊՁԲ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 «ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՊՁԲ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	eychgroup@gmail.com
2	«ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ	foodmood1@yandex.com
3	«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ	rafojakh@gmail.com
4	«ԲԱՅԿ» ՍՊԸ	info@bike.am
5	«Թռաքս Սերվիս» ՍՊԸ	proektinterinvest@mail.ru

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները									
		«Էյչ Գրուպ» ՍՊԸ		«ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ		«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ		«ԲԱՅԿ» ՍՊԸ		«Թռաքս Սերվիս» ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ									
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	883350000	613925000	736710000	666250000	799500000	715000000	858000000	730925000	877110000	733270416.67	879924500

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

5.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետով սահմանված ժամկետում, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 15.03.2024թ. ժամը 15:00-ին

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ի և **«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 **«ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը թերի է, բացակայում են նշումներն այն մասին, որ.

- Խճուղային հեծանիվները նախատեսված են 7-9-րդ և 10-12-րդ դասարանների աշակերտների համար:
- Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Մատակարարումը ըստ ուսումնական հաստատությունների /պատվիրատուի կողմից տրամադրված բաշխման ցանկին համապատասխան/ պետք է իրականացնի մատակարարն իր միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օրը՝ հաշված մատակարարման օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով:
- Կատարողը հեծանիվի նմուշը նախորոք համաձայնեցնում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության սպորտի քաղաքականության վարչության և «Հայաստանի հեծանվային մարզաձևի ֆեդերացիա» - ի մասնգետի հետ:
- Հեծանիվները մատակարարվում են ամբողջական հավաքված վիճակում:
- Հեծանիվը պետք է համապատասխանի ISO ստանդարտներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.3 **«Թռաքս Սերվիս» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ բացակայում է մասնակցի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.4 **«ԲԱՅԿ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի ապահովումը, ինչը շտկման ենթակա չէ: Բացի այդ, հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը թերի է, բացակայում են նշումներն այն մասին, թե հեծանիվների տեխնիկական մասերը ինչ ֆիրմաների արտադրության են, պահանջվող չափսերի հեծանիվներից յուրաքանչյուրի քանակը, զանգի առկայությունը, նշումն այն մասին, որ խճուղային հեծանիվները նախատեսված են 7-9-րդ և 10-12-րդ դասարանների աշակերտների համար, առկա է ավելորդ նշում այն մասին, որ երաշխիքը գործում է, եթե թերությունը գործարանային է, մեխանիկական վնասվածքների վրա երաշխիքի պայմանները չեն տարածվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ-ին** և **«Թռաքս Սերվիս» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.2 և 6.3 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից սահմանված ժամկետում շտկելուց հետո՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 19.03.2024թ. ժամը 15:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 **«ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ-ն** և **«Թռաքս Սերվիս» ՍՊԸ**-ն սահմանված ժամկետում շտկել են հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները և շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

9. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին տեղ զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ին,
2-րդ տեղ զաղեցրած մասնակից ճանաչել **«ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ-ին,**
3-րդ տեղ զաղեցրած մասնակից ճանաչել **«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ –ին,**
4-րդ տեղ զաղեցրած մասնակից ճանաչել **«Թռաքս Սերվիս» ՍՊԸ–ին**

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

9.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ մերժել **«ԲԱՅԿ» ՍՊԸ**-ի հայտը՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին էլեկտրոնային ձևով ՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Կարեն Գիլոյան /նախագահ/

---------- Դավիթ Բաղումյան

---------- Սերգեյ Աբրահամյան

---------- Գարեգին Խլղաթյան

---------- Սվետլանա Գրիգորյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/